



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 3 ՄԱՐՏ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն Վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ զիս իմ անօրէնութենէս,
եւ իմ մեղքէս զիս սրբէ:
Արդարեւ, անօրէն եմ ծնունդէս ի վեր,
մեղաւոր եմ մօրս յղութեան պահէն սկսեալ:
Սակայն դուն, Տէր, որովհետեւ մարդուս սրտին մէջ
ճշմարտութիւնը կ'ուզես տեսնել,
ծածուկ կերպով իմաստութիւնդ յայտնեցիր ինձի:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ զիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա զիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ով Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէդ մի՛ զրկեր զիս, Տէր,
եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ զիս:
Բաց իմ շրթներս, ով Տէր,
թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քննապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՅԱԿՈԲ ԵՍԱԿԻՆ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ (33:1-20)

Յակոբ մրահոգուած էր թէ ինչպէս պիտի հանդիպի եղբօրը՝ Եսաիին: Այդ մրահոգութիւնը փարատելու համար Աստուած երազի ճամբով ցոյց փուտաւ Յակոբին թէ Աստուած իր կողքին է:

Ահա հասաւ պահը, «**Յակոբ աչքերը վերցուց եւ ահա Եսաւ կու գայ**»: Յակոբ ըստ այնմ դասաւորեց իր կիները, հարճերն ու զաւակները, եւ ինք անոնց առջեւէն անցաւ եւ մինչեւ իր եղբօր մօտենալը գեղնին հաւասար 7 անգամ երկրպագութիւն ըրաւ:

Հետաքրքրական հասարակութիւն մըն է, որ մեզի ցոյց կու տայ Յակոբի նկարագրի փոփոխութիւնը: Նախորդ հասարակութիւն մէջ երբ Յակոբ փեսիլքը ունեցաւ, փեսիլքի պահուն նաեւ փեղի ունեցաւ անունի փոփոխութիւնը: Այդ անունի փոփոխութիւնը նաեւ նկարագրի փոփոխութիւն կը նշանակէ: Այնպէս ինչպէս որ էր պարագան Աբրահամին, Սարային, Յակոբին, Պետրոսին, Պօղոսին: Ուրեմն, սա կը նշանակէ, անգամ մը որ Աստուծոյ հետ կապ սկսինք ունենալու անպայմանօրէն պէտք է որ փեղի ունենայ փոփոխութիւն մը: Այս պարագային փոփոխութիւնը առաջին հերթին նկարագրի փոփոխութիւնն է: Այնպէս ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «մտքով ու հոգիով նորոգուեցէք, նոր մարդ դարձէք ձեր արարիչին պատկերին համաձայն» (Եփես 4:23): Ահա այդ անունի փոփոխութեան արտայայտութիւնը ցոյց կը փրուի Յակոբի խոնարհումովը, եւ ինքզինք ծառայ կոչելով: Այս երեսոյթը երկու բան կրնայ ըսել, կամ այն է որ Յակոբ կը փորձէ այնպէս մը ձեւանալ Եսաիին, որպէսզի կարծէք անոր զայրոյթը մեղմացնէ, կամ իրօք անդրանկութեան իրաւունքը ունենալով հանդերձ Յակոբ գիտէ նաեւ խոնարհիլ: Երկորդը փարբերակը, որովհետեւ իրաւ մեծերը գիտեն խոնարհիլ, ու մանաւանդ երբ Աստուծոյ առաջնորդութեամբ է որ կ'ընթանայ իրենց կեանքը:

Միւս կողմէ, Յակոբի արտայայտութիւնը «**Իմ ձեռքէս ընծաս ընդունէ, որովհետեւ քու երեսդ Աստուծոյ երեսը փեսանելու պէս փեսայ եւ ինձի հաճեցար**»: Այո, նախորդ հասարակութիւն մէջ Յակոբ փեսիլքի պահուն փեսաւ Աստուծոյ երեսը եւ ողջ մնաց: Ահա հիմա այս արտայայտութեամբ կու գայ ըսելու թէ այդ փեսիլքը պարտաստութիւն էր իրեն համար: Միւս կողմէ նաեւ ցոյց փալու, թէ Եսաիին նկարագիրն ալ փոխուած է: Այո, Եսաւը ինք ալ անցեալը մոռցած է եւ մեծահոգի վարմունք մը կ'որդեգրէ Յակոբի նկարմամբ ամբողջութեամբ ներողամիտ գրնուելով, մինչեւ իսկ անոր նուէրները չ'ընդունիր, ոչ որպէս արհամարհանք, այլ որովհետեւ կը բաւարարուի իր ունեցածով:

Այս բոլորը կը նշանակեն, թէ ինչպէս մարդիկ կրնան ուիրշին մէջ փեսանել ու գնահատել ազնուութիւնն ու բարութիւն, եթէ երբեք իրենց ներքին հայեացքն ալ բարի ու ազնիւ չէ: Ահաւասիկ Եսաիին հայեացքն ալ փոխուած էր իր եղբօրը նկարմամբ, որուն համար ալ երբ Յակոբ փեսաւ զանիկա անոր երեսը Աստուծոյ երեսին պէս էր, այսինքն՝ կարծէք անոր բարութիւնն ու ազնուութիւնը Աստուծոյ վերաբերմունքին նման:

Ահա այս հասարակութիւն մեզի կը սորվեցնէ, թէ մեր նկարագրային գիծերը որքանով փոխուած են հանդէպ մեր նմաններուն, մանաւանդ եթէ երբեք մեր կեանքի ընթացքը կ'առաջնորդուի Աստուծով: Անոր համար Պօղոս Առաքեալը կ'ըսէ. «Քննեցէք դուք ձեզ, փեսանելու համար թէ Քրիստոսը կ'ապրի ձեր մէջ, թէ պարզապէս անոր անունը կը կրէք» (Բ Կորնթ 13:5):